ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1050

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 58 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Մաունթեյնարթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազոր ներկայացուցիչ՝ Վազգեն Հալաբյանի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հրազդան համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 14-ի «Մաունթեյնարթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված N 58 շինարարության թույլտվությունը:
2.Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Գուրգեն Հակոբյանի վրա:
3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Մաունթեյնարթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1051

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 252-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N 920-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով և հիմք ընդունելով Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Վանատուր թաղամասի 327 տան բնակիչ Արտակ Նավասարդյանի 2023թ. սեպտեմբերի 5-ի N 7472 և Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 12 շենքի 26 բնակարանի բնակիչ Լևոն Ալեքսանյանի 2023թ. սեպտեմբերի 6-ի N 7518 դիմումները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի 900125001025 հաշվեհամարին որպես փոխադրամիջոցի համար գույքահարկ վճարված գումարից 23532 /քսաներեք հազար հինգ հարյուր երեսուներկու/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Վանատուր թաղամասի 327 տան բնակիչ Արտակ Նավասարդյանին և 17649 /տասնյոթ հազար վեց հարյուր քառասունինը/ դրամը հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի 12 շենքի 26 բնակարանի բնակիչ Լևոն Ալեքսանյանին՝ առաջացած գերավճարների չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1052

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 208-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 3/երեք/ հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3/երեք/ հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2023 թ. սեպտեմբեր 07-ի
N 1052 որոշման

ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական տուրքի տեսակը	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը
1.	Ա/Ձ «Պավել Թավաքալյան»	Կոտայք, Մեղրաձոր, տուն 16	Ք. Հրազդան, Կենտորն թ-ս 41/2	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
2.	Ա/Ձ «Պավել Թավաքալյան»	Կոտայք, Մեղրաձոր, տուն 16	Ք. Հրազդան, Կենտորն թ-ս 41/2	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
3.	Ա/Ձ «Խաչիկ Համբարձումյան»	Ք. Հրազդան, Երևանյան փողոց տուն 23	Ք. Հրազդան, Երևանյան 23	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
4.	Ա/Ձ «Խաչիկ Համբարձումյան»	Ք. Հրազդան, Երևանյան փողոց տուն 23	Ք. Հրազդան, Երևանյան 23	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար

				փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք		
5.	Ա/Ձ «Գոռ Ղազարյան»	Ք. Հրազդան, Վանատուր 38	Ք. Հրազդան, Վանատուր 38	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար
6.	Ա/Ձ «Գոռ Ղազարյան»	Ք. Հրազդան, Վանատուր 38	Ք. Հրազդան, Վանատուր 38	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի երրորդ եռամսյակի համար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1053

ԱՆԱՍՆԱՍՊԱՆԴԱՆՈՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Գրիգոր Հակոբյանի լիազորված անձ Գարիկ Հակոբյանի 2023 թվականի օգոստոսի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Գրիգոր Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2600716, տրված՝ 2008 թվականի օգոստոսի 19-ին/ Հրազդան քաղաքի Նար-Դոսի փողոցում գտնվող անասնասպանդանոցին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան Հարավային թաղամասի Նար-Դոսի փողոց 31/2:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1054

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վազգեն Սրապիոնի Հովսեփյանի 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումը, բանվորների և ծառայողների այգեգործական ընկերության կողմից 1984 թվականի ապրիլի 25-ին տրված այգեգործի անդամատոմսը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 20238XRGEL ծածկագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Օրինական ճանաչել Վազգեն Սրապիոնի Հովսեփյանին պատկանող Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասում գտնվող 500.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 115.28 քմ արտաքին մակերեսով այգետնակը:
2.Հողամասի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Ինքնակամ կառուցված այգետնակը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
4. Վազգեն Սրապիոնի Հովսեփյանին պատկանող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 5-րդ փողոց 81:
5. Ինքնակամ կառուցված այգետնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում

քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1055

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Գրետա Զավենի Տոներյանի 2023 թվականի օգոստոսի 31-ի դիմումը, բանվորների և ծառայողների այգեգործական ընկերության կողմից 1985 թվականի դեկտեմբերի 16-ին տրված այգեգործի անդամատոմսը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023DR9WUN ծածկագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինական ճանաչել Գրետա Զավենի Տոներյանին պատկանող Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասում գտնվող 500.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 121.42 քմ արտաքին մակերեսով այգետնակը:
2. Հողամասի սահմանները որոշվում են ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Ինքնակամ կառուցված այգետնակը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
4. Գրետա Զավենի Տոներյանին պատկանող այգետնակին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 7-րդ փողոց 1:
5. Ինքնակամ կառուցված այգետնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում

քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 սեպտեմբերի 2023թվականի N 1056

ՄԱՆՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Գուրգեն Հակոբյանի կողմից կազմված արձանագրության հիման վրա: Արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Սահմանադրության հրապարակ 71 հասցեում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝ շինարարական հրապարակի կահավորումը ամբողջական չէ, բացակայում է ցանկապատը, առկա չեն մուտքերի և ելքերի հատվածները: Դեռևս 2023 թվականի հուլիսի 11-ին Հրազդան համայնքի ղեկավարի կողմից տրվել է N 73 շինարարության թույլտվություն՝ Կոտայքի մարզ, Հրազդան քաղաք, Սահմանադրության հրապարակ 71 հասցեում մանկական խաղասրահի և սրճարանի կառուցման նպատակով: Նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ տրամադրված թույլտվության պայմաններում կառուցապատող՝ Հրազդան քաղաքի Կոստանյան փողոցի 42 տան բնակիչ Մանվել Բաղդասարյանի կողմից կատարված արարքում առևերույթ վարչական իրավախախտման տարրեր են պարունակում: Մ. Բաղդասարյանի արարքում հայտնաբերվել է պատշաճ թույլտվության պայմաններում՝ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ, որը հիմնավորվում է կազմված արձանագրությունից: Մասնավորապես Մանվել Բաղդասարյանը շինարարության կատարման ընթացքում ծանր տեխնիկայի կիրառման արդյունքում վնասել է հարևանությամբ գտնվող՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ամբողջովին հիմնանորոգված ճանապարհները, մայթեզրները և եզրաքարերը, որով էական վնաս է պատճառել Հրազդան համայնքին: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ համայնքապետարանի համապատասխան մասնագետների կողմից բազմիցս բանավոր կերպով կառուցապատողին նախազգուշացվել է հայտնաբերված թերությունների մասին և առաջարկվել շինարարությունը իրականացնել

քաղաքաշինական նորմերի ու կանոնների խստիվ պահպանմամբ և դրանով չվնասել համայնքին: Հարկ է նշել, որ կազմված արձանագրությունը ստորագրվել է իրավախախտում կատարած անձ Մանվել Բաղդասարյանի կողմից և վերջինս ընդունել է կատարած խախտումների փաստը և հայտնել իր պատրաստակամությունը սեղմ ժամկետներում հայտնաբերված խախտումները վերացնել:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Մանվել Բաղդասարյանը չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասով՝ գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Օրենսդրությամբ հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր փաստական հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում, որ կատարվել է իրավախախտում, որի համար պատասխանատու է Մանվել Բաղդասարյանը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանած կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կառուցապատողներն պարտավոր են՝ կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան: Նույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Տվյալ պարագայում Մանվել Բաղդասարյանին Հրազդան քաղաքի Սահմանադրության հրապարակ 71 հասցեում տրամադրված թույլտվության պայմաններում իրականացրել է շինարարություն՝ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական

ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 8-րդ, 32-րդ հոդվածներով, 154-րդ հոդվածով, 219[1]-րդ և 305-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի N 64 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մանվել Բաղդասարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 500.000 / հինգ հարյուր հազար / դրամ գումարի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մանվել Բաղդասարյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

07 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2023թվականի N 1057

ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ /ծածկագիր՝ 2.1-6/ Հասմիկ Հակոբյանին շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հասմիկ Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

08 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2023թվականի N 1058

ԳՈՒՄԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մառլենա Ասատրյանի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդանի համայնքապետարանի 900125001504 հաշվեհամարին շինությունների օրինականացման նպատակով վճարված 201 500 (երկու հարյուր մեկ հազար հինգ հարյուր) դրամ, 58 400 (հիսունութ հազար չորս հարյուր) դրամ, 6 600 (վեց հազար վեց հարյուր) դրամ և 4 400 (չորս հազար չորս հարյուր) դրամ գումարները հետ վերադարձնել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 184 տան բնակիչ Մառլենա Հայրապետի Ասատրյանին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

08 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2023թվականի N 1059

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող 480.3քմ մակերեսով 07-001-0185-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Ջրառատ թաղամաս 551/17:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

11 սեպտեմբերի 2023թ.
ք.Հրազդան